մը մէջ ան խաղացած է՝ «Քէթի» ամերիկացի երիտասարդ ոստիկանի մը դերը: Նոյն տարին ան մարմնաւորած է թայուանցի հերոսի մը հոլանդացի նշանաւոր դերը, իսկ 2000ին «Լ'արմ սոմպը» ֆիլմաշարին մէջ՝ եւրոպացի հիւսիսային մը աղջկան դերը: Ասկայն ցարդ անոր մարմնաւորած ամէնէն կարեւոր դերը կը հանդիսանայ «Իւն Ֆլէօր Ֆանէթրոթ» ժապաւենին մէջ, ուր կը պատկերացնէ ամերիկացի երիտասարդ կնոջ մը դժուարութիւնները 1940ական տարիներու Չինաստանի մէջ:

Փեջինի մէջ Լիանան եւ իր քոյրը՝ Մարինէն, ճանչցուած են իբրեւ «երկու հայ քոյր ծաղիկներ»:

աշխարհէն ներս իրենց ապահոված հռչակին կողքին անոնք նաեւ դերեր կը ստանձնեն օֆֆերաններու մէջ: «Մեր հռչակը կ'օգտագործենք չին հանրութեան ծանօթացնելու համար հայկական մշակոյթն ու աւանդութիւնները: Մեր երգերով, պարերով եւ աւանդական տարագներով միշտ մասնակցութիւն կը բերենք հայութեան որեւէ ձեւով առնչուած ձեռնարկներու», ըսած է Լիանա: «Ֆրանս Արմենի» յոյս կը յայտնէ, որ Լիանա Ետիկարեան ապագային իր կարեւոր ներդրումը ունենայ նաեւ հայկական շարժապատկերի աշխարհին մէջ: Մինչ այդ «հայ ծաղիկը» կը շարունակէ բացուել չինական հողի վրայ:



Մարիոն Ետիկարեանը

խաղարձաբար ընդունելու Հայաստանի եւ Չինաստանի համայնարանները: Չինաստանի մէջ իրենց համայնարանական ուսուցիչ շարունակողներէն ոմանք ընտրած են շարժապատկերի մարզը եւ արդէն իսկ դերեր ստանձնած՝ տեղական ժապաւեններու մէջ: Անոնցմէ մէկն է Լիանա Ետիկարեան: 26 տարեկանին ան արդէն իսկ յաջողած է շահիլ չինական դերերուն համակերպչական դերերը: Լիանա Ետիկարեանը՝ հեռատեսիլի ժապաւեններուն եւ ֆիլմաշարներուն մէջ իր ստանձնած դերերուն շնորհիւ:

«ԷՖԹԵՐ ՖՐԻՏԸՄ»Ը՝ «ՏԸ ՄԵԹԸՏ»

Վերջերս, Լուս Անճելլիսի «Տը մեթըտ» շարժապատկերի փառաստանին ներկայացուած է ամերիկահայ բեմադրիչ Վահէ Պապայանի «Էֆթըր Ֆրիտըմ» ժապաւենը:

«Էֆթըր Ֆրիտըմ» կը ներկայացնէ Միացեալ Նահանգներ հաստատուած հայ ընտանիքի մը կեանքը: Ժապաւենը նաեւ կը վերլուծէ ներաշխարհը հասուն տարիքը թեւակոխած հայ անհատի մը, որ կը կատարէ իր ինքնութեան փնտռումը՝ միաժամանակ պարտական զգալով զինք Միացեալ Նահանգներ բերողներուն՝ բեմադրիչ Վահէ Պապայանի կը նպատակադրէ իր ոճով ներկայացնել զաղթականութեան թեման՝ դիտուած տարբեր անկիւններէ:

Ժապաւենը նկարահանուած է կլենտոնիլի եւ անոր մերձակայ շրջաններուն մէջ: Դերասաններուն շարքին են Միք Թոմսը, Սոֆի Շահինեան, Շանթ Պէժմանեան, Գրիգոր Սաթրամեան, Անահիտ Շահրիլի եւ ուրիշներ:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԲԵՄԱԳԻՐ ՄԸ՝ ԱԼԷՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

«Լա սիթէ տը լա փէրը ի փափարացի» ժապաւենին հեղինակն է Լը պուլէ՝ ժապաւենին բեմադրութիւնը: Արկածախնդրական եւ էքշն տանրերուն պատկանող այս ժապաւենը կը ներկայացնէ ամէն զնով վիճակահանութեան մեծ պարզեւր շահելու ձգտող երկու բախտախնդիրներուն արկածախնդրութիւնները: Նշենք, որ Ալէն Պէրպէրեան նաեւ այս ժապաւենին արտադրիչներէն է:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՍՐԱՀՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Ամբարն արձակուրդի միջոցառումը այս օրերուն սկսած է տիրել նաեւ շարժապատկերի լիբանանեան սրահներէն ներս, որոնք վերջերս յատկանշալի մէկ նոր ժապաւեն կը ցուցադրեն: Պէտք է ըսել, որ Յուլիս ամսուան համար ծանուցումները կը խոստանան ցուցադրութիւնը քիչ թէ շատ որակաւոր կամ առնուազն մեծ ազդուկ հանած եւ տոմսակներու կարեւոր վաճառքներ ապահոված շարք մը ժապաւեններու, ինչպէս՝ «Պըրթոյն կըրթի», «Քրոստոպիլ» եւ «Հայ քոյր»-ը: Սակայն, մինչեւ այս ժապաւեններուն ցուցադրութիւնը, շարժապատկերի սիրահարներուն հրամցուող նորութիւնները կ'ընդգրկեն միջակ ժապաւեններու շարք մը, որոնք, աւելնալով արդէն իսկ ցուցադրուող նմանօրինակ ժապաւեններու ցանկին, կը կազմեն յարաբերաբար մեծ թիւ մը:



Քարոլին Տրնոպ Եւ Վեոսան Էնոնոն՝ «Պէլ մամա»-ի մէջ:

Յուլիս ամսուան «Պէլ մամա» կատակերգութիւնը (բեմադրիչ՝ Կարլոյ Ալիոն), ուր այս ժանրէն ներս երկար տարիներու բացակայութենէ հետք կը վերադառնան Ֆրանսացի դերասանուհի Քարոլին Տրնոպը: Նշենք, որ «Ուրիթ Ֆամ» ժապաւենին հետք այս մէկը Տրնոպի երկրորդ ժապաւենն է, որ վերջին ամիսներուն կը ցուցադրուի Լիբանանի մէջ: 1999ի արտադրութիւն «Պէլ մամա» կը ներկայացնէ երիտասարդ փաստաբան մը (Վէնսան Լիստոն), որ պսակուելու պահուն կը սիրահարի յիշեալ եւ այլ նշանաւոր դերասաններու ներկայութեան, «Պէլ մամա» կը մնայ միջակ ժապաւեն մը:

Կը ցուցադրուի նաեւ համակարգչային ընկերութիւններու աշխարհակալական ձգտումները ներկայացնող Քրիլըր մը՝ «Էնթրթեյնմենթ» (բեմադրիչ՝ Փիթըր Հոուիթ): Այս ժապաւենը քողարկուած ձեւով կը ձագկէ «Մայքրոսոֆթ»-ն ու Պիլ Կէյթցը: Համակարգիչի հանճարող պաշտօնեայ մը (Թիմ Ռոպինս) իր համեստ ընկերները լքելով կը միանայ համակարգչային ծրագրիչներու մենատիրական «Մայնթիս» ընկերութեան, որուն սեփականատէրը ոչ մէկ բանի, նոյնիսկ ոճիբու առջեւ կանգ կ'առնէ՝ չէզոքացնելու համար իր մրցակիցները:

ՄԵՐ ԿԱՐԾԻԲԸ

- «ՊԼԵ ՆԱՅԹ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սեթ Էլի, Սոտեթ, Կալաքսի)
- «ՊԵԼ ՄԱՄԱ» (Զոնքորտ, Սոտեթ, Զայիթ)
- «ԷՆԹԻԹՐԱՍԹ» (Փլանք / Ապրաթ, Զոնքորտ, Ֆրիոնի, Թրիփոլի, Զոնք)
- «ԹԸՐԹԻՆ ԿՈՍԹՅ» (Եսփաս, Ամփիր / Սոտեթ, Կալաքսի, Էլիթ, Լաս Սալիմաս)
- «ԿԱՐԹՅ ՈՒՈՐ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սոտեթ, Կալաքսի, Սքալլէ 2001, Լաս Սալիմաս)
- «ՓԵԼԻԵ ՌՈՒՄ» (Եսփաս, Ամփիր / Տիւն, Սեթ Էլի, Սոտեթ, Սոֆիլ Կալաքսի, Լաս Սալիմաս)
- «ԼԱՍՎԷԼԵ ԷԼ ԸՏ ՏԻԵ» (Փլանք / Զայիթ, Զոնքորտ, Ամփիր, Սոտեթ)
- «ՄԻՆ ՍԸԻՆ» (Փլանք / Ապրաթ, Զոնք, Թրիփոլի, Զոնքորտ, Ֆրիոնի)
- «ՖՈՐԹԻ ՏԵՅՁ ԵՆՏ ՖՈՐԹԻ ՆԱՅԹՅ» (Փլանք / Ապրաթ, Զոնք, Թրիփոլի, Զոնքորտ, Ֆրիոնի)
- «ՍԵՐ ՌՈՒՐՁ, ԵՓԻՁՈՏ II - ԹԵՔ ԱՏ ՏԸ ԸԼՆԱՁ» (Ամփիր, Սոֆիլ, Էլիթ, Սքալլէ 2001, Կալաքսի)
- «ՏԸ ԸԸՐՍ ԱՏ ՏԸ ՃԵՏ ՍԵՐՓԻՈՒՆ» (Փլանք, Զոնք)
- «ԱՅ ԵՍ ԵՍ» (Փլանք / Ապրաթ, Զոնք, Զոնքորտ, Ֆրիոնի)
- «ՏԱՄԻՆ ԹՈՒ ԸՐԹ» (Փլանք / Զոնք, Փլաք)
- «ՈՒԵՍ ՈՒՅՍ» (Փլանք / Ապրաթ, Զոնքորտ)
- «Ի.ԹԻ. ՏԸ ԵՍԹՐԱ - ԹԵՐԵՍԹԻՈՒՆ» (Փլանք / Ապրաթ, Զոնք, Զոնքորտ, Ֆրիոնի, Ամպաստ)
- «ՍՓԱՅՏԸՐ - ՄԵՆ» (Եսփաս, Ամփիր/Տիւն, Սոտեթ, Կալաքսի, Սեթ Էլի, Լաս Սալիմաս, Սքալլէ 2001)
- «ՇՕԹԱՅՍ» (Փլանք / Ապրաթ, Զոնք, Զոնքորտ, Ֆրիոնի)
- «ՏԸ ԸՍԹԻՆՈՒ ԱՏ ՍՈՆԹ ԵՐԻՍԹՕ» (Սքալլէ 2001, Լաս Սալիմաս)
- «ԱՍԹԵՐԻԵՍ Է ՕՊԵԼԻԵՍ - ՍԻՍԻՈՆ ԸԼԵՈՓԱՐ» (Փլանք / Ֆրիոնի, Զայիթ, Զոնքորտ)
- «ՍՓԱՅ ԿԵՅՄԱ» (Փլանք / Ամպաստ, Փլաք)
- «ՍՈՆՍԹՐՈՐ ԻՆԵ.» (Փլանք / Փլաք)
- «ՊԼԵ ԸՈՔ ՏԱՌՆ» (Էլիթ)

●●●● Գերազանց ●●●● Զատ լա ●●●● Լա ●● Սիլիակ ● Զեք յանձնարարը □ Զեք դիտած

ԸՆԴՈՒՄՆԵՐՈՒ ՍՐԱՀՆԵՐԷՆ ԸՆԴՈՒՄՆԵՐՈՒ ԹԻՒԵՐԸ
 Ըսփաս - 09/212516 - Սոտեթ - 01/616707 - Տիւն - 01/792123 - Սոֆիլ - 01/328806 - Զոնքորտ - 01/738439 - Ամպաստ - 09/226010 - Ֆրիոնի - 01/485590 - Ապրաթ - 01/292192 - Ֆայիթ - 09/912503 - Զոնք - 09/221363 - Սպալիթ - 08/813901 - Սեթ Էլի - 04/439922

Շաբթուան Ժապաւենը

«ՊԼԵ ՆԱՅԹ»՝ ԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ ԺԱՊԱԻԷՆ ՄԸ



Մարիոն Լորդն՝ միջնադարեան դղեակներու մէջ

Միջնադարեան սովորական ճիւղերով ժապաւեններ միշտ ալ ներշնչած են շարժապատկերի արտադրիչները ու բեմադրիչները: Այդպիսի մթնոլորտ փոխանցող ժապաւեն մըն էր «Լորտ աֆ տը ռիկկո»-ը, որուն ամերիկեան եւ եւրոպական սրահներուն մէջ կ'ընկերակցին նոյն շունչով շարք մը ժապաւեններ, ինչպէս՝ «Տը Գայթ Էն տը քուէթ», «Տաճարն զ Էն տրեկընգ», «Ին շայնիկ արմըր»: Մինչ այս ժապաւենները ընդհանրապէս իրենց ճիւղերը կը ներկայացնեն էքշնի մթնոլորտին մէջ, բեմադրիչ ձիւ ձանկերի «Պլէք Գայթ»-ը միջնադարեան անոր հարցերը կը պարզէ կատակերգական շունչով:

Ժապաւենը աւելի ծիծաղաշարժ դարձնելու համար անոր գլխաւոր հերոսը՝ ժամալ Ուոքըրը (Մարիոն Լորդն) կը ճամբորդէ ժամանակին մէջ դէպի ետեւ: 21րդ դարու ամերիկեան փողոցին ու անոր բարբերուն հարագատ գաւազը օր մը միջնադարեան մթնոլորտով հանրային պարտեզի մը մէջ մեթամորֆոս տրամադրութեամբ պտտուելով ընթացքի կ'իյնայ փոսի մը մէջ: Ան միջապէս ինքզինքը կը գտնէ 14րդ դարու Անգլիոյ մէջ, ուր շողշողուն գրահներով ասպետներ եւ տխուր սպասողական վիճակի մէջ գտնուող օրիորդներ կը շլացնեն անոր աչքերը: Ժամալ իր դիւրահաղորդ բնուորութեամբ անմիջապէս կապեր կը հաստատէ արքայական (այսինքն՝ 21րդ դարու յատուկ) մտայնութեան տէր օրիորդի մը (Մարշալ Թոմասը) եւ շուայտ կեանք վարող ասպետի մը հետ (Թոմ Ուիլքինսըն) եւ առանց վարանելու կը լծուի բոնակալ թագաւորի մը դէմ՝ ծաւալող ըմբոստութեան շարժումի մը: Լէնսըլթի եւ Կալահատի նման առասպելական անուններու կողքին, կ'արձանագրուի նաեւ անունը... Ժամալ Ուոքըրի, որ իր ժողովրդային լեզուամտոնորութեան ու բարբերուն փոխարէն կը սորվի քիչ մը պատմութիւն:

Նշենք, որ ժապաւենը հիմնուած է Մարք Թուէյնի «Է Գոնէքթըք Եանքի Ին Քիկ Արթըրը քորք» վեպին վրայ: Արդարեւ, ժամալ Եանքի իր տարագով է, որ կը պտտուի միջնադարեան դղեակներու միջանցքներուն մէջ:

Այս ժապաւենը կը մնայ սովորականի սահմաններուն մէջ՝ առանց կարեւալ հանդիսատեսին տրամադրելու իսկապէս յիշարժան խօսակցութիւններ եւ պատկերներ: Իսկ ինչ կը վերաբերի գլխաւոր հերոսին խաղարկութեան, ապա շարժապատկերի կարգ մը բնականութեան կարծիքով, Մարիոն Լորդն (նախորդ ժապաւեններէն յիշենք «Պիկ մամա գաուս»-ը) արդէն իսկ ինքզինքը հաստատած կատակերգական ժապաւեններու ստղծ է, որ իր իւրաքանչիւր ժապաւենին համար կը գանձէ... 20 միլիոն տոլար: Իսկ թէ ան որքանով վուրջ մրցակից էտի Մըքֆիին, կը մնայ հարցական: Հակառակ տարուան կատակերգական ժապաւենը ըլլալու ակներեւ ճիգին, «Պլէք Գայթ» այս անունով կը մնայ շատ տկար փորձ մը:

«ՀԱՅՖԻԼՍ» ՍԹԻՏԻՈՅԷՆ՝ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԺԱՊԱԻԷՆՆԵՐ

Երեւանի «Հայֆիլմ» շարժապատկերի սթիւտիոյին մէջ աւարտած են բեմադրիչ Յարութիւն ինչաւորեանի «Վաւերագրողը» եւ բեմադրիչ Լիւսիա Սահակեանի «Ո՞ղջ են արդեօք այդ երգերը» ժապաւեններուն նկարահանումները, որոնք տեւած են չուրջ մէկ տարի:

«Վաւերագրողը» ժապաւենը կը ներկայացնէ արեւմտագէտի ինքնութեան ու ոճին առնչուած հարցեր, իսկ «Ո՞ղջ են արդեօք այդ երգերը» ժապաւենը իւրայատուկ ձեւով կը կատարէ կոմիտասի ստեղծագործութիւններուն վերլուծումը:

Պատրաստեց՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

Հայ Նորույնություններ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՒԱԳՐԱԽՈՒՄԲԸ ԿԸ ՄԱՏՈՒՑԷ ԱՇԽՈՒԺ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Ֆրեզոնոյի մէջ Ուիլիամ Սարոյեանի մուտքուտուր փառատօնը վերջ գտաւ անցեալ Մայիսին, Հայաստանի Ազգային Սենեկային ցուցադրուած ինչ համերգով, կազմակերպութեամբ Համազգայինի եւ «Արմինիոն Թեթրոլոնի Կրուկ»-ի: Նուագախումբին տպաւորիչ ելոյթին մասին գրած է ամերիկացի անուանի երաժշտական քննադատ եւ համացանցի musictheoryresources.com կայքի ղրխաւոր խմբագիր Ճորճ Ուարըն, որուն յօդուածը լոյս տեսած է «Տը Ֆրեզոնո Պի» թերթին մէջ: Ստորեւ՝ քարգանձութիւնը:

Ինչ մը երգ, քիչ մը պար, բարձր արուեստ եւ երգիծանք: Հայաստանի Ազգային Սենեկային նուագախումբը մեծ այլազանութիւն բերաւ Թատրոն թիւթըրի իր համերգով: Արամ Հարաբէկեան Ֆրեզոնո վերադարձաւ իր նուագախումբով, զոր կը ղեկավարէ 1997էն ի վեր, եւ տուաւ հրաշալի համերգ մը:

Համերգին բացումը կատարուեցաւ Էտովարտ Կրիկի պետական «Հոլպէրկ սուիթ»ով: 5 շարժումներէ բաղկացած այս գործին կատարողութեան մէջ իր յայտ եկաւ նուագախումբին եւ ղեկավարին երաժշտական բարձր մակարդակը: Երաժիշտները սկիզբէն նուագեցին երաժշտական մէկ գործիքի պէս՝ ամուր կերպով կառչեցով իրարու եւ պահելով բժանդի ճաշակաւոր հնչուածութիւն: Նուագախումբը գեղարուեստական ուշադիր մօտեցումով ձեւաւորեց երաժշտական տողերը եւ Հարաբէկեանի աշխուժ նուագին թռիչքը երբեմն հասաւ գրեթէ լռութեան:

Սոփրանօ երգչուհի Նունէ Պատայեան երգեց Պիզէի «Քարմէն սուիթ»ին հուշակաւոր «Հապաներա» արիան: Ան Քարմէնի տարագով ներկայացաւ բեմ եւ մարմնաւորեց անոր տի-



կարը՝ կեանքի կոչելով անոր հմայքը: Յայտագիրը կ'ընդգրկէր նաեւ բազմաթիւ հայկական երգեր եւ պարեր, որոնք իւրապատուկ դիմագիծ մը տուին համերգին: Ֆրեզոնոյի հայ համայնքին երգչախումբը հրճուանքով կատարեց Թաթուր Ալթունեանէն երկու հայերէն երգեր՝ «Ճաման եար»ը եւ «Կենաց երգ»ը, ներդաշնակ կապ մը հաստատելով նուագախումբին հետ:

Կոմիտասի հայկական երգերն ու պարերը նաեւ «Արամազեանի դաշնաւորումով, հետաքրքրական էին համերգին ընդհանուր պատկերին, ինչպէս նաեւ զիրար հակասող իրենց բնոյթով: Առաջինը դերին ուսումնասիրով պարերանակ մըն էր, իսկ երկրորդը՝ խանդավառ եւ զօրաւոր կառնուցումով, զոր նուագելու ընթացքին երաժիշտները առիթը ունեցան պեղելու իրենց լարերը: Յատկանշական էր, երբ նոյն երաժիշտները, համութեամբ կը կատարէին Կրիկի դասական ոճով գործն ու կոմիտասի ժողովրդային երաժշտութիւնը: Այսուհանդերձ յայտագիրին մէջ կը գերիշխէր Ռուբէն Ալթունեանի յատկապէս նուագախումբին կողմէ ապսպրուած «Հար լեւոն» գործը, որուն առաջին կատարումը հնչեց Քալիֆորնիայի մէջ: Արարատ Տալաքեան կատարեց տուտուկի եւ զուռնայի մենանուագի բաժինները:

Կարճ ներածականէ մը ետք Տալաքեան տուտուկը բարձրացուց շուրթներուն եւ նուագեց շնչալիք միայն քիչ մը աւելի բարձր գեղեցիկ երաժշտութիւն մը: Այս մեղեդիա-

շունչ եղանակը շարունակուեցաւ որոշ ժամանակ մը, ապա անկիւնադարձ մը ետք յանկարծ նուագախումբը պայթեցուց կատարի լարեր եւ Տալաքեան նուագեց զուռնան. երաժշտական կոշտ գործիք մը, որ համազօր է զոգջ փողերով շեփոթի: Չուռնան ճշգրտ նուագախումբէն բարձր, քաղաքային շրջանի մը մէջ ծագած խոսովութեան մը տպաւորութիւնը առթելով:

Մեղեդիաշունչ երանգը վերադարձաւ որոշ ժամանակ մը ետք եւ գործը հանդարտօրէն հասաւ իր աւարտին: Երաժիշտութիւնը մեղմ սահեցաւ լարերուն վրայէն, շատ դասակարգ ոճով, մինչ տուտուկը փայլուն հակասութիւն մը ստեղծեց իր սուր ձայնով:

Համերգին վերջաւորութեան Ֆրեզոնոյն սոփրանօ երգչուհի Ռոնտա Կրով միացաւ նուագախումբին եւ երգեց Ուիլիամ Սարոյեանի ու Ռոն Պաղտասարեանի «Քամ ան- ա մայ հաւա» երգը. կնոջ մը կողմէ տղամարդու մը ուղղուած հրաւեր մը, զոր կրով կատարեց մարմնաւորելով ամբողջ դերը: Ան պշտանքով վերաբերեցաւ ղեկավարին եւ նուագողներուն հետ, պարեց, շրորաց եւ օրօրուեցաւ երաժշտութեան հետ՝ փոխանցելով երգին ամբողջական իմաստը:

Ամերիկահայ խմբավար Արամ Հարաբէկեան 1997էն ի վեր կը ղրխաւորէ Հայաստանի Ազգային Սենեկային նուագախումբը, որ իր 24 անդամներով վերջին 5 տարիներուն ելոյթներ ունեցած է Միացեալ Նահանգներու, Անգլիոյ, Չեխոսլովակիոյ, Կիպրոսի, Յունաստանի, Լիբանանի եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ: Յառաջիկայ երկու եղանակներուն նուագախումբը պիտի մասնակցի եւրոպական ամառային փառատօններու եւ համերգային շրջապտոյտներ պիտի կատարէ ղէպի ձափոն, Հարաբէկեան Ամերիկա եւ Ռուսիա: Իրենց գեղարուեստական առաքելութիւնը՝ նուագախումբը յաճախ կ'ապսպրէ եւ կը կատարէ երաժշտական նոր գործեր, որոնք կը ներառեն աւանդական գործիքներ, ինչպէս՝ տուտուկ, զուռնա, շուրի եւ քամանչա:

ՏԷՅՎԻՏ ԽԼՐՏԵԱՆԻ ՄՈՒՄԱՆ ԲԵՂՈՒՆ ԳՐԱԳԵՏ ՄԸ ԿԸ ԹՕԹԱՓԷ «ՊԻԹ» ԲԱՆԱՍԵՂՈՒ ՊԻՏԱԿԸ ԵՒ ԿԸ ԲԱՆԱՅ ՆՈՐ ԺԱՄԱՅ ՄԸ: «ՏԻ ԵՆՈՇԻԷՅՈՐԸ ՓՐԷՍ» ԿԸ ԳՐԷ:

Բ. Աշխարհամարտէն ետք ամերիկացի բազմաթիւ գրագէտներու պէս Տէյվիտ Խլրտեան իր մուսան գտած է 1960ական տարիներուն, Սան Ֆրանսիսքոյի մէջ:

Չայն գտած է բարեկամանալով «Պիթ»-ի հետ. երիտասարդ գրագէտներու ըմբոստ, սերտ կապերով միացած եղբայրութիւն մը, որ Պաղպատեցումին ընթացքին Միացեալ Նահանգներու գրական պանթէոնին մէջ իրեն համար շինած էր անուն մը, ձէք Քերուաքի բառերով՝ «խորհրդապաշտ հեռաւորութիւն» մը պահելով գրական ընդունւած կարգէն:

Խլրտեան կապեր հաստատած է Ռիչըրտ Պրոթիկանի եւ Ալըն Կինսպըրիի նման գրագէտներու հետ, սակայն կը յիշէ, թէ հասած էր ժամանակ մը, երբ դիտումնաւոր կերպով կը խուսափէր «Պիթ»-ի հետ առնչուելէ: Ան կ'ըզգէր ճանչցուել իրրեւ Տէյվիտ Խլրտեան բանաստեղծը, եւ ոչ՝ Տէյվիտ Խլրտեան «Պիթ» բանաստեղծը: «Չէի ուզեր նոյնացուել ոեւէ մէկուն հետ, - կ'ըսէ ան, - եւ գտայ իմ սեփական ձայնս»:

Խլրտեանի ձայնը 40 տարի ետք կարելի է լսել 60 գիրքերու մէջ, որոնք կ'ընդգրկեն բանաստեղծութիւններ, վէպեր, մանկական պատմութեանքներ, յուշեր, քննադատական ուսումնասիրութիւններ եւ թարգմանութիւններ:

Խլրտեան իր կնոջ՝ Նոնի Հոկոթկեանի հետ կը բնակի Մեմփիսի հանդարտ մէկ թաղամասին մէջ, ուր կը խնամէ պարտէզ մը եւ կը հրատարակէ ռոմանթիկ նիւթերու նուիրուած «Սթոփ-փայնտը» քառամսեայ թերթը: Անոր կինը մրցանակներու արժանացած պատկերագրող է:

Անոնց կեանքը միացած է արուեստով եւ ոգեկականութեամբ: Երկուքը իրարու հանդիպած են 31 տարի առաջ, Նիւ Եորքի մէջ: Հոկոթկեան հասակ նետած էր Պրոնքսի մէջ եւ Խլրտեան հոն գացած էր գրական թերթ մը հրատարակելու: Ան տեսած էր Հոկոթկեանի պատկերագրողութեանը եւ խնդրած էր նկար մը գծել իր «Հոմէրոսի Թու Ատան» գիրքին համար: Հոկոթկեան կարողացած էր Խլրտեանի բանաստեղծութիւնները: Ամիս մը ետք անոնք ամուսնացած էին:

Այսօր Խլրտեանի գիրքերէն շատերը պատկերագրողութեան են Հոկոթկեանի գծանկարներով, ջրանկարներով եւ փայտի վրայ փորագրութիւններով:

«Գրեթէ լիաժամ է մեր գործը, որովհետեւ միայն երկուքս կ'աշխատենք», կ'ըսէ Խլրտեան, խօսելով 2 տարուան թերթին մասին, որ կը կեդրոնանայ հայ խորհրդապաշտ փիլիսոփայ ձորճ Իվանովիչի Կիւրճիէֆի ինքնագիտակցութեան հրատարակուած ուսուցումներուն վրայ եւ ունի շուրջ 300 բաժանորդ:

Այս ամուր ամերիկացի է, սակայն ինչպէս Խլրտեան կը նշէ, երկուքը կը բաժնեն «լուսանցքային» ամերիկացիներ ըլլալու ամերիկեան յատկութիւնը: Անոնց ծնողները հայ գաղթականներ են:

Խլրտեան ծնած է Ռասին (Ուիսքոնսին), սակայն անոր արմատները նիւթը կը կազմեն 1979ին հրատարակուած անոր «Տը ռոտ Ֆրամ հոմ. տը սթորի աֆ էն արմինը կըրը» վէպին: Վէպին հերոսը անոր մայրն է, որ Ա. Աշխարհամարտին մագապուած խոյս տուած է օսմանեան թուրքիայէն, երբ շուրջ 1.5 միլիոն հայեր սպանուած են ծրագրուած ցեղասպանութեամբ, Թուրքիոյ արեւելեան շրջանները հայաթափելու նպատակով, ինչպէս կ'ըսեն հայերը: Թուրքերը կը մերժեն ընդունիլ ցեղասպանութիւնը: «Մայրս կ'ուզէր իր պատմութիւնը պատմել

ինձի, եւ ես երբեք չէի ուզեր մտիկ ընել, - կ'ըսէ Խլրտեան: - Կը յետաձգէի, որքան որ կրնայի, որովհետեւ պէտք էր վերապրէի զայն, ինչք պէտք էր վերապրէի: Շատ տառապելի էր: Իրապէս սուղ զին մը վճարեցի զայն գրելու համար: Երկուքս վճարեցինք սուղ զին մը»:

«Տը ռոտ Ֆրամ հոմ» վէպը Խլրտեանի բազմաթիւ գործերուն նման անձնական կեանքի առնչուող հարցերը գրականութեան ճամբով քննելու միջոց մըն է, մասամբ ինքնակենսագրութեան մը պէս:

Ասիկա մասնաւորաբար ճիշդ է բանաստեղծութիւններուս պարագային, կ'ըսէ ան:

«Տաուն էթ տը Սանթա Ֆէ Տեփօ. 20 Ֆրեզոնո փոչթց» (1970) գիրքին մէջ Խլրտեան հետեւեալ ձեւով կը բացատրէ իր գրականութիւնը: «Որք եւ հաստատ կարիք մը կը զգայի հասկնալու կեանքս եւ գրելու այդ մասին:

Բնագրաբար կը զգայի, թէ գրելը փնտնուող միջոցը պիտի ըլլար»:

Խլրտեան «Տը Ռոտ Ֆրամ հոմ» վէպը գրած է 6 ամսուան մէջ. նա սովորաբար իր վէպերը կը գրէ 3 ամսուան մէջ: Հակառակ այս վէպին դժուար ծնունդին, անիկա զինք տեղորոշած է Ամերիկայի գրական քարտէսին վրայ: Գիրքը արժանացած է «Ամերիքըն Պուք» մրցանակին թիկնածութեան եւ հնձած է շարք մը այլ մրցանակներ, որոնց շարքին՝ «Նիւպորի Անըր Պուք» մրցանակը:

Հոկոթկեան եւս Ամերիկայի տարածքին ճանաչում գտած է իր գործերով: Ան քիչերէն է, որ 2 անգամ արժանացած է մակարդակաւոր «Քայլքըթ մետըլ» մրցանակին. առաջինը՝ 1968ին, իր «Օլուէյզ ռուժ Ֆոր ուան մոր» գործին համար, եւ երկրորդը 1972ին՝ «Ուան Ֆայն տէյ» գործին: Հոկոթկեանի հայրը օրաթերթի եւ նկարներ կը փորագրէր եւ կը ինք մղած է գեղանկարչութեան, ինչպէս կ'ըսէ ան, արժեւորելով իր հօր զօրակցութիւնը:

«Օր մը նայեցայ հօրս գծած մէկ նկարին եւ մտածեցի, թէ շատ լաւ գործ մը չէր, - կը յիշէ ան՝ պատմելով գեղարուեստի մէջ իր առաջին արկածային դրոճութեան մասին: - Հետեւաբար աթոռի մը վրայ ելայ եւ սրբագրեցի: Հազիւ 3 տարեկան էի եւ այդ օրէն ի վեր կը գծեմ»:

Անոր 1970ական տարիներուն Նիւ Եորքէն վերադարձած է Օրեկոն, քանի մը տարի մարդասիրական գործեր կատարելով եւ օգնելով թմրամոլութեան տառապող պատանի-երիտասարդներու: Անոնք Օրեկոն գացած են մօտ ըլլալու համար Կիւրճիէֆի հաստատած Թու Ռիվըր Ֆարմ դպրոցին եւ հիմնած են տպարան մը:

Խլրտեան Կիւրճիէֆը կը կոչէ նոր դարաշրջանի մտածողութեան հայրը: Կիւրճիէֆ անոր տուած է ոչ միայն կեանքը ապրելու ցուցմունքներ, այլ նաեւ՝ գրական նիւթեր:

Խլրտեանի «Միտ աֆ լայթ» գործը՝ «Սթոփ-փայնտը Պուք»-ի հրատարակութեամբ, կը կրէ «Փոչթ ֆրամ Կիւրճիէֆ քամիւնիթի» ենթավերնագիրը:

Ոգեկանութեան, ինքնաճանաչումի եւ գրական ստեղծագործութեան միաձուլումը Խլրտեանի առիթ տուած է իրագործելու այն ինչ որ ճամբայ ելած է ընելու: Կիւրճիէֆի գործերը անոր ընձեռած են մեթոտը, ինչպէս կը խոստովանի ան, իսկ գրելը՝ հմտութիւնը:

«Կը կարծեմ, որ իմ գործերուս ընդմէջէն ինքզինքս ճանչնալով եւ կեանքիս խառնակութեան ու խելագարութեան լուծում մը գտնելով՝ հասած եմ խաղաղութեան, - կ'ըսէ Խլրտեան: - Անշուշտ կը զգամ, թէ կեանքս նպատակի մը ծագումն է եւ՝ գիտակցուած ձեւով ապրուած»:

ԲՈԼՈՐԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵԱԳՈՒՄՈՎ ԸԱՅ ԴԵՐԱՍԱՆՈՒԷՒ ԱՏՐԻԱՆԷ ՊԱՐՊՕ ԿԸ ՄԱՐՄԱԻՈՐԷ ԿՈՒՏԵԻ ԴԵՐԸ՝ «ՖԻՏԼԵՐ ԱՆ ՏԸ ՈՈՒՖ» ԵՐԱԺՅԱՆԱՍԱՆ ԹԱՏԵՐԱՄԱՂԻՆ ՄԷՃ: «ՓԻՑՊԵՐԿ ԹՐԻՊԻՈՒՆ» ԿԸ ՄԱՐԱՍԱՍՆԷ:

Դերասանուհի Ատրիանէ Պարպօ քանի մը բաներ գիտէ դերասանութեան եւ զօրաւոր կին ըլլալու մասին: Պատկերասփիւռի «Մոտ» կատակերգական յայտագիրներուն մէջ Պի Արթըրի աղջկան՝ Քարոլի դերով ան ամուսնալուծուած մայր մըն է, որ գաւակ մը կը մեծցնէ:

Իրական կեանքի մէջ նա իր շուրջ հետաքրքրութիւն ստեղծեց 5 տարի առաջ, երբ 51 տարեկանին ծնունդ տուաւ երկուորեակ զաւակներու:

Քալիֆորնիա ծնած այս կինը ընթացաւ էր է եւ ձայնասփիւռէն գիրքեր կը ներկայացնէր անցեալին: Այժմ ան ծրարած է իր գիրքերը եւ իր զաւակներուն հետ կը վերադառնայ Փիցպըրկ, մարմնաւորելու համար բեմական աշխարհի գերագոյն կիններէն՝ աշխատասէր եւ լեզուանի Կոլտէի տիպարը: «Ֆիտլըր ան տը ռուֆ» երաժշտախառն թատերախաղին մէջ: Փիցպըրկ Սիվիլ Լայթ Օփերային այս ներկայացումը կը շարունակուի մինչեւ 24 Յունիս:

Պարպօ ունեցած է բերան գործունէութիւն պատկերասփիւռի, Պրոտուէյի, շարժապատկերի, համերգներու եւ ձայնագրութեան մարգերուն մէջ:

Ան պարբերաբար կը կատարէ Օսուրլոյի մօր դերը «Տրիւ Քարէյ յօ» յայտագիրին մէջ եւ խանդավառ է պատկերասփիւռի «Քարնիվըլ» յայտագիրներուն մէջ իր նոր եւ տրամաթիք դերով:

Ան նախապէս դերեր ստանձնած է Փիցպըրկի տարածքին նկարահանուած «Քրիվիչօ» եւ «Թու իվըլ այգ» ժապէհներուն մէջ եւ ուրախ է այս քաղաքը վերադառնալով:

«Միշտ մտածած եմ, որ եթէ երկար ժամանակի համար դեր պիտի ստանձնեմ ներկայացումի մը մէջ, կ'ուզեմ, որ ատիկա ըլլայ «Ֆիտլըր ան տը ռուֆ»ը, կ'ըսէ ան:

Պարպօ հմայուած է այս գործին թատերականութեամբ: «Անիկա կը պարտադրէ, որ դերասանը տեւաբար աշխատի եւ բան մը իրագործէ որոշ տեղ մը հասնելու համար ամէն գիշեր», կը բացատրէ ան: «Ֆիտլըր ան տը ռուֆ» թատերախաղը կը շարունակէ արձագանգել հանդիսատեսներուն հոգիները մէջ, մէկէ աւելի պատմառեւներով: «Անիկա երեւակայնութիւնն է, այլ կը պատմէ մեր պատմութիւնը, այս պարագային՝ հրեայ ընտանիքի մը պատմութիւնը: Նիւթը հայրածանցն է, որուն ենթակայ ենք ամէն տեղ, - կ'ըսէ ան եւ կը նշէ, թէ պայման չէ հրեայ ըլլալ նոյն փորձառութիւնը ապրելու համար: «Ընտանիքս հայ է: Անոնք ենթարկուած են անցեալ դարու առաջին ցեղասպանութեան: Երբ Հիթլըր կազի սենեակներու մէջ սկսաւ հրեաներ սպաննել, ըսաւ. «Սպաննեցէք գա-

նոնք: Ո՞վ այսօր կը յիշէ հայերը»: Իսկ այժմ տեսէք, թէ ինչ կը պատահի աշխարհի տարբեր երկիրներուն մէջ», կ'ըսէ Պարպօ: «Ֆիտլըր ան տը ռուֆ» թատերախաղը անժամանցելի եւ միաժամանակ՝ ժամանակակից գործ մըն է, կ'աւելցնէ ան: «Թատերախաղը կը պատմէ ընտանիքի մը, մօր մը, զաւակի մը, հօր մը եւ աղջկան մը մասին, կը վերաբերի պատերի եւ մեր կեանքը կազմող բոլոր այլ բաներուն: Անիկա երբեք ժամանակավրէյ պիտի չդառնայ»:

Թատերախաղը կը վերակենդանացնէ զօրաւոր կամքի տէր, հմակերելի եւ աղքատ դուստպանի մը՝ Թեւիի կեանքը եւ կը պատկերէ 1905ին ուսակական փոքր գիւղի մը մէջ իր աւանդութիւններուն եւ իր ապրած տան կառուցած մնալու անոր ճիգը:

Թեւի կը կրէ 5 աղջիկներու բեռը: Ան քաղաքին ամուսնութիւններու միջնորդին օգնութեամբ կը փորձէ յաղթ ամուսնութիւններ դասաւորել իր առաջին 3 աղջիկներուն համար, թէեւ անոնք օժիտէ զուրկ են:

Սակայն իրենց հօր փորձերը արհամարհելով, աղջիկները կ'եղագեն ամուսնանալ իրենց սիրած անձերուն հետ: Զօրաւոր աւանդութիւններուն եւ իր բարութեան միջեւ տատանելով՝ Թեւի կը դիմագրաւէ իր Աստուածը եւ օգնութիւն կը խնդրէ դիմակայելու համար իր կեանքին փոփոխութիւնները: Ան կը յաղդի իր ընտանիքին եւ այլ գիւղացիներուն հետ ստեղծել ուրախութեամբ եւ սիրով լեցուն կեանք մը, հակառակ քաղաքական աննպաստ պայմաններու:

Պարպօ առաջին անգամ Պրոտուէյի թատերասահներուն մէջ ելոյթ ունեցած է 23 տարեկանին, Թեւիի երկրորդ աղջկան դերով: Ան կը հաւատայ, թէ «Ֆիտլըր ան տը ռուֆ»ը յարմար է բոլոր տարիքի հանդիսատեսներուն: «Իմ 5 տարեկան զաւակներս կը բերեմ, որպէսզի դիտեն զայն: Կը կարծեմ, որ թատերախաղը հրաշալի փորձառութիւն մը կը պարգեւէ նաեւ պատանիներուն, - կ'ըսէ ան: - Անիկա կը ներկայացնէ ժամանակ մը, որուն ծանօթ կրնան չըլլալ անոնք, սակայն կը բովանդակէ անոնց դիմագրաւած հարցերը: Այս դարուն եւ ժամանակներուն պարզապէս չենք տեսնայ այն ինչ որ կը կատարուի թատերախաղին մէջ, երբ պատանի մը իր ընտանքին կամքին հակառակ, կը նախընտրէ ընտրել տարբեր ուղի:

(ՅԱ.ՊԱՒՈՒԱՏ)

Պատրաստեց՝
Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

ONE SECOND IS ENOUGH... Արագը Կը Պատահի Երկրորդից Են Մեք...



...BUT WE USE THEM ALL. ...ԻՍԿ ՄԵՐԵ ՆԵՐԿԱՅ ԵՐ ԱՄԵՆ ԵՐԿՎԱՅՐԵԱՆ.

ԱՖՏԻԼ AFHIL

Աֆտո-ի Ենթ, Բ. Յարկ, 7 հեռ. ել. Յարք. (01) 262231-242556-242557

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՄԱՆՈՒԿ ԱՆԹՈՍԵԱՆԻ մահուան քառասուն-քին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Յունիս 2002, Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԵՓՐԵՍ ԶԵՇԻՇԵԱՆԻ մահուան Բ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Յունիս 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:


ՆԻՐՎԱ ՈՍԿԵՐԻՉԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Յունիս 2002, Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՆԵՐՍԻՆԷ ԿԵՕԶՃԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Յունիս 2002, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

- ☆ ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)
☆ ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
☆ ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յունիս)
☆ ԱՌԻԻԾ (22 Յունիսէն 23 Օգոստոս)
☆ ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
☆ ԿԻՏԻՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
☆ ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
☆ ԱՅԾԵՆԱԻՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
☆ ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
☆ ԶՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

THE REVOLUTIONARY JAPANESE Air CONDITIONERS



DYNAMIC made in Japan



I like it Powerful Ideal Cool DYNAMIC

- 9000 - 24000 B.T.U. HEAT PUMP SPLIT SYSTEMS
EXCEPTIONALLY QUIET OPERATION
LOW POWER CONSUMPTION, HIGH EFFICIENCY
FULL LCD DISPLAY WIRELESS REMOTE CONTROLLED
UNBEATABLE PRICES

GAS G. Ayanian & Sons

Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9 Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

Lantern Studio video advertisement with contact info.

Varna travel & tourism advertisement with starting prices.

ԾԱՆՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ
Ծամբորդութեան պատճառով, 140 քառ. մետր տարածութեամբ...

ՍԱԿԱՐԱՆ

Table listing various goods and their prices in Armenian Lira.

Table listing more goods and prices, including oil and other commodities.

Table listing additional goods and prices.

Table with exchange rates for US Dollar and Euro.

ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱԲԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ

ԱՅՍ ԱՄԻՍ ՅԱՏՈՒԿ ԳԻՆ ԲՈՒՈՐ ԱՏԱՌԿ ՍԿՍՈՂ ԱՆՈՒՆԵՐՈՒՆ. ԿԵՍ ԺԱՄՆՈՅ ՎԻԾԵՐ ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ, ՍԱԿԱՆՈՒՆՈՎ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԿԱՐՆԵՐՈՎ

ՕՐԱՏԵՏՐ

Panasonic advertisement featuring a TV and a list of programs for the week.

ԽԱՉԲԱՌ-ԹԻԻ 5175

Lottery advertisement for Khachaball-5175 with a grid and winning numbers.

Մ Ա Ր Ջ Ա Կ ԱՆ - Ա Շ Խ Ա Բ Ն



ԱՐՉԱԳԱՆԳՆԵՐ՝ 2002Ի ՄՈՆՏԻԱԼԵՆ



Ռաուլ Կոնցալես (աջին), որ կը փորձէ թեթև փորձեր կատարել: Չախից՝ Ֆեռնանտո Մորիեցը

ՖԻՖԱԻ իրաւարարներու յանձնախումբին մէկ պատասխանատուն երէկ յայտարարեց, թէ հակառակ անոր, որ վերջերս շատեր ընդադատեցին 2002ի Մոնտիալին կարգ մը իրաւարարները, սակայն իրողութիւնը այդքան ալ չի համապատասխաներ անոնց ըսածներուն:

Մեծագոյն դժգոհողները եղան Իտալիա եւ Փորթուգալ:

«Ինչ որ ալ ըլլան դժգոհութիւնները, պիտի սպասենք մինչեւ Մոնտիալին աւարտը, եզրակացութեան մը յանգելու համար: Սակայն ընդհանուր առմամբ իրաւարարները առաւելագոյն կատարած են իրենց պաշտօնը: Վերջապէս անոնք էականեր են եւ ոչ թէ մարդամեքենաներ, ինչ որ կը նշանակէ, թէ ենթակայ են որոշ սխալներու», կ'ըսէ ՖԻՖԱԻ իրաւարարներու յանձնախումբին մէկ պատասխանատուն՝ էտկարտո Քոսեսալ Մենտէզ:

● ՄՊԱՆԻՈՅ Ֆուլթոլի ազգային խումբին մարզիչ Խոսէ Անթոնիո Քամաչո երէկ վստահեցուց, թէ Հարաւային Գորէյայի դէմ տեղի ունենալիք քառորդ աւարտական հանգրուանի մրցումին դաշտ պիտի ներկայանայ միայն այն ժամանակ, երբ ինքզինքը ամբողջութեամբ ապաքինած զգայ:

Այլիքի դէմ տեղի ունեցած մրցումին (Բ. հանգրուանին) վերաւորուած Ռաուլ, վերջին երկու օրերուն պաշտօնապէս փորձեր չկատարեց իր խմբակիցներուն հետ, այլ ան փորձեց առաւելագոյն ձեւով ինքզինքը վերագտնել, լաւապէս պատրաստուելու եւ լաւ զգալու ժամանակ դաշտ ներկայանալու, թէեւ ան այդքան ալ անմասն չի մնար թեթեւ փորձերէ:

● ՍԵՆԵԿԱԼԻ Ֆուլթոլի ազգային խումբը, որ այժմ շատ լուրջ փորձեր կը կատարէ, թուրքերոյ դէմ տեղի ունենալիք մրցումին իր ամենէն լաւ արդիւնքը արձանագրելու համար, որպէսզի յաջողի Մոնտիալի 72 տարուան պատմութեան մէջ ափրիկեան ամենէն լաւ արդիւնք արձանագրող խումբը դառնալ, հասնելով կիսաւարտական հանգրուան: Անկէկայ այժմ յաջողած է Քամբերուի կատարածը իրագործել, որ 1990ի Մոնտիալին քառորդ աւարտականին պարտուած էր Անգոլայէն, 3-2 արդիւնքով:

Սենեկալի մարզիչ Պրիւնո Մեթիլե երէկուան սկսած փորձերը ջնջեց, երբ կարգ մը մարզիկներ յայտարարեցին, թէ իրենք զիրենք քիչ մը յոգնած կը զգան:

ՅՈՐՄԻՒԼԱ 1

ԿԻՐԱԿԻ ՕՐ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ

ՅՈՐՄԻՒԼԱ 1ի 2002ի աշխարհի պիտիանուրթեան 9րդ կրան փրին տեղի կ'ունենայ Կիրակի, 23 Յունիսին Եւրոպայի մէջ՝ Գերմանիա (Նիւրպիւրկրինկ): 60 լէվինգ այս կրան փրին, որուն երկարութիւնն է 308,5 քմ., պիտի ըլլայ կարեւոր Ուիլիլմսի երկու վարորդներուն՝ Խուան Փալլո Մոնթոյայի (Քոլումպիա) եւ Ռայֆ Շումպերի (Գերմանիա), որպէսզի փորձեն անպայման յաղթանակ մը արձանագրել, այլապէս անոնց եւ Ֆեռարիի վարորդ Միքայել Շումպերի (Գերմանիա) կէտերու տարբերութիւնը կը դառնայ աւելի հսկայական, անշուշտ Միքայել Շումպերի արձանագրելիք յաղթանակին պարագային: Այժմ Ուիլիլմսի երկու վարորդները, 43ական կէտով ետ կը մնան անկէ:

Վերջին երկու տարիներուն, նոյն այս կրան փրին շահած Միքայել Շումպերը պիտի փորձէ հեթորիք մը իրագործել, դարձեալ փոփոխութիւն վրայ գրաւելով առաջին դիրքը:

Առաջին անգամ Յորմուլա 1ի աշխարհին 1951ին (Սիլվերսթրոմի մէջ) իր առաջին յաղթանակը արձանագրած Ֆեռարի, ցարդ շահած է 150 յաղթանակ, մինչ Մաքլարըն՝ 135, իսկ Ուիլիլմսի՝ 108:

Կիրակի օր յաղթանակը մը արձանագրելու պարագային, Շումպերը պիտի շահի իր ասպարէզին 60րդ կրան փրին, Ֆեռարիի հետ՝ 41րդը, իսկ այս տարուան՝ 7րդը, ինը կրան փրիններու ընթացքին:



Երկու օրուան դարձեալ մը ետք, այսօր՝ Ուրբաթ, 21 Յունիսին տեղի կ'ունենան 2002ի Մոնտիալի ֆուլթոլի մրցաշարին քառորդ աւարտական հանգրուանի մրցումները: Այսօրուան եւ վաղուան յայտագիրներուն վրայ են երկուքական ճակատումներ:

Այնպէս ինչպէս պատահեցաւ Բ. հանգրուանի մրցումներուն, նոյնը պիտի պատահի մնացեալ ութ մրցումներուն ընթացքին, այսինքն որեւէ սխալ կատարող խումբ, որու պիտի մնայ մրցաշարքէն՝ նկատի ունենալով, որ նաք - առիթի դրութիւնը սկսաւ կիրարկուիլ Բ. հանգրուանի մրցումներէն: Հասարակութեան պարագային պիտի դիմել երկարաձգման, ապա անխուսափելիին փենալթիներուն: Այս վերջինը կրնայ տեղի չունենալ, եթէ պատահի, որ երկարաձգման ընթացքին որեւէ խումբ յաջողի «կոտրել կոյ» մը նշանակել:

Նշենք, թէ Բ. հանգրուանին նշանակուեցան երկու «կոտրել կոյ»եր, մինչ մէկ մրցում վերջ գտաւ փենալթիներով: Քառորդ աւարտական հանգրուանի առաջին մրցումը տեղի կ'ունենայ այսօր



Ամերիկացի կը պատրաստուի, Գերմանիոյ դէմ տեղի ունենալիք մրցումին

առաւօտեան ժամը 9:30ին (Պէյրուսի ժամով), Շիլդուքայի մէջ (Ճափոն), որուն ընթացքին տեղի կ'ունենայ սպասուած ճակատումը՝ Անգոլիոյ եւ Պրայիի միջեւ: Օրուան իրաւարարն է՝ Ֆիլիպէ Ռամոս Ռիպո (Մեքսիքա), իսկ կողմի իրաւարարները՝ Հեթոր Վերլարա (Քանադա) եւ Մոհամէտ Սալիտ (Մալտի):


Ճափոնի եւ Հարաւային Գորէյայի մէջ տեղի ունեցող 2002ի Մոնտիալին ցարդ կատարուած են 56 մրցումներ: Պրայիլ - Անգոլիա մրցումը պիտի ըլլայ 57րդ մրցումը՝ ընդհանուր 64 մրցումներէն:

Ետդարձակնարկ մը կատարելով՝ Պրայիլ եւ Անգոլիա 1956էն 2000 թուական իրարու դէմ յանդիման եկած են 20 անգամ. Պրայիլ արձանագրած է 9 յաղթանակ, իսկ Անգոլիա՝ 3: 8 մրցում վերջ գտած է հաւասարութեամբ:

Արդ, 17 մրցումները եղած են բարեկամական, իսկ երեքը՝

ՄՈՆՏԻԱԼ 2002

ԱՅՍՕՐ՝ ՊՐԱՉԻԼ - ԱՆԳՐԻԱ ՍՊԱՍՈՒԱԾ ԳԱԳԱԹԻ ՃԱԿԱՏՈՒՄԸ



Անգլիոյ ֆուլթոլի ազգային խումբին մարզիկները, լուրջ փորձերու մէջ, իսկ...

Մոնտիալի: Այդ երեք մրցումներուն ընթացքին, Պրայիլ արձանագրած է երկու յաղթանակ, իսկ մէկ մրցում՝ հաւասար:

Անգոլիա, որ 11րդ անգամ ըլլալով իր մասնակցութիւնը կը բերէ Մոնտիալին, իր ամէն կարելին պիտի ընէ Մոնտիալի մրցումներուն արձանագրել իր առաջին յաղթանակը: Պրայիլ չորս անգամ (մրցանիշ մը) հանդիսացած է աշխարհի պիտիանուրթեան 1958ին, 1962ին, 1970ին եւ 1994ին, իսկ Անգոլիա՝ մէկ անգամ՝ 1966ին:

Անգլիոյ ֆուլթոլի ազգային խումբին շուէտուցի մարզիչը՝

թացքին կատարած խաղարկութեամբ՝ նկատի ունենալով, որ անոնք ամենէն դժուար խմբակէն յաջողեցան անցնիլ Բ. հանգրուան:

Անգլիոյ խմբակը՝ Չ. խմբակ, Մոնտիալին ընթացքին անաչցուած էր դժուարութիւններու հանդիպած էին, երբ 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրած էին:

Երկու խումբերը շատ հաւանաբար դաշտ ներկայանան հետեւեալ կայմով:
ՄՆԳՐԻԱ - Տէյվիտ Սիմոն - Տէնի Միլլ, Ռիօ Ֆերտինանտ, Սոլ Բէմպըլ, Էշիլ Բոլ - Տէյվիտ Պեքիամ, Փոլ Սթրոյ, Նիքի Պաթ, Թրեւոր Սիլվեր - Էմիլ Հեքի եւ Մայքըլ Օուր:

ՊՐԱՉԻԼ - Մարքոս - Լուչիօ, Էմիլիանո, Ռոքէ Շունիոր, Բաֆու - Տիլպերթո Սիլվա, Շունիիօ, Ռոպերթո Բարլոս - Ռոնալտո եւ Ռիվայտո:

«Յաղթանակի մը պարագային, Պրայիլ յոյս ունի հասնելու աւարտական հանգրուան: Սակայն չեմ գիտեր, թէ արդէոք ո՞վ պիտի ըլլայ այսօրուան մրցումին յաղթականը», կ'ըսէ Փելլէ:

Անկասկած որ այս մրցումը պիտի ըլլայ սպասուածէն շատ աւելի տաք եւ հետաքրքրական, որովհետեւ անոնք Մոնտիալի ընթացքին վերջին անգամ իրարմէն իրարմէն հանդիման եկած են ինը կոյ, Էրիքսըն կ'ըսէ, թէ իր ծրագիրներուն մէջ չկայ մէկ - թու - մէնի խաղարկութիւնը կիրարկել: Ան իր մարզիկներուն կը թելադրէ, որ պէտք է ուշադրութիւն դարձնեն այն մարզիկին, որ կը մտնուայ յանդիման եկած 20 անգամ. Պրայիլ արձանագրած է 9 յաղթանակ, իսկ Անգոլիա՝ 3: 8 մրցում վերջ գտած է հաւասարութեամբ:

Արդ, 17 մրցումները եղած են բարեկամական, իսկ երեքը՝

ցոյց կու տայ, որ Անգոլիա պիտի ըլլայ յաղթականը:

Պրայիլի մարզիչ Լուիս Ֆիլիպէ Սթրոյարիի ակնարկելով՝ Պիէլլա կ'ըսէ, թէ անոր



... Պրայիլի ֆուլթոլի ազգային խումբին մարզիկները՝ հանգիստի մէջ

պաշտպանողականը դժուար թէ կարենայ տոկայ անգլիացի յաղթանակներուն կողմէ կապակերպուած վտանգաւոր յարձակումներուն, այնպէս ինչպէս իր մարզիկները դժուարութիւններու հանդիպած էին, երբ 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրած էին:

Երկու խումբերը շատ հաւանաբար դաշտ ներկայանան հետեւեալ կայմով:
ՄՆԳՐԻԱ - Տէյվիտ Սիմոն - Տէնի Միլլ, Ռիօ Ֆերտինանտ, Սոլ Բէմպըլ, Էշիլ Բոլ - Տէյվիտ Պեքիամ, Փոլ Սթրոյ, Նիքի Պաթ, Թրեւոր Սիլվեր - Էմիլ Հեքի եւ Մայքըլ Օուր:

ՊՐԱՉԻԼ - Մարքոս - Լուչիօ, Էմիլիանո, Ռոքէ Շունիոր, Բաֆու - Տիլպերթո Սիլվա, Շունիիօ, Ռոպերթո Բարլոս - Ռոնալտո եւ Ռիվայտո:

«Յաղթանակի մը պարագային, Պրայիլ յոյս ունի հասնելու աւարտական հանգրուան: Սակայն չեմ գիտեր, թէ արդէոք ո՞վ պիտի ըլլայ այսօրուան մրցումին յաղթականը», կ'ըսէ Փելլէ:

Անկասկած որ այս մրցումը պիտի ըլլայ սպասուածէն շատ աւելի տաք եւ հետաքրքրական, որովհետեւ անոնք Մոնտիալի ընթացքին վերջին անգամ իրարմէն իրարմէն հանդիման եկած են ինը կոյ, Էրիքսըն կ'ըսէ, թէ իր ծրագիրներուն մէջ չկայ մէկ - թու - մէնի խաղարկութիւնը կիրարկել: Ան իր մարզիկներուն կը թելադրէ, որ պէտք է ուշադրութիւն դարձնեն այն մարզիկին, որ կը մտնուայ յանդիման եկած 20 անգամ. Պրայիլ արձանագրած է 9 յաղթանակ, իսկ Անգոլիա՝ 3: 8 մրցում վերջ գտած է հաւասարութեամբ:

Արդ, 17 մրցումները եղած են բարեկամական, իսկ երեքը՝

գամ, որոնց ընթացքին Գերմանիա արձանագրած է 4 յաղթանակ, իսկ Միացեալ Նահանգները՝ 2:

Մոնտիալին ընթացքին, անոնք նախապէս միայն մէկ անգամ իրարու դէմ յանդիման եկած են (1998ին), որուն ընթացքին Գերմանիա 2-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած է: Մնացեալ չորսը եղած են բարեկամական մրցումներ:

Գերմանիա, որ 16րդ անգամ ըլլալով իր մասնակցութիւնը կը բերէ Մոնտիալին, իր ամէն կարելին պիտի ընէ հաւասարելու համար Պրայիլի հաստատած մրցանիշին, 1954ին, 1974ին եւ 1990ին իր կատարած իրագործումներէն ետք: Միացեալ Նահանգներ 7րդ անգամ ըլլալով է որ կը մասնակցին Մոնտիալին:

Վերջին անգամ 1930ին քառորդ աւարտական հանգրուանին տուած մը ապահոված Միացեալ Նահանգներ, արդէոք պիտի յաջողի՞ն իրենց յառաջխաղացքը շարունակելու եւ այլ անակնկալներ ալ ստեղծել, այս անգամ պարտութեան մատուցելով Գերմանիան:

Ամերիկացիներուն մարզիչը՝ Պրուս Արենա յոյսով է, որ Գերմանիոյ դէմ եւս իր մարզիկները կը շարունակեն իրենց յաղթական ընթացքը, այնպէս ինչպէս կատարած էին Փորթուգալի եւ Մեքսիքայի դէմ:

Ստորեւ՝ երկու խումբերուն հաւանական կայմերը.

ԳԵՐՄԱՆԻԱ - Օլիվեր Բան - Բրիսթոֆ Մեթյելտոր, Բարսթոն Ռամելով, Թոմաս Լինքը - Թորսթրոն Ֆրիսկ, Պենոն Շնայտեր, Տիեթմար Հասման, Միքայել Պայաք, Բրիսթոն Ֆիլը - Միրոսլաւ Զոլյու եւ Օլիվեր Նեօվիլ:

Մ. ՆԱՎԱՍԿՆԵՐ. - Պրէտ Ֆրիտլ - Էտի Փոփ, Փալլո Մաթթրոնի, Կրիկ Պերիպոր - Թոնի Սանտի, Լէնտր Տոնովան, Բլաուտիօ Ռէյս, Տոն Օպրայր, Տրանք Հէյտլը - Զիլինք Մէթի եւ Պրայլի Մաքլարայտ:



Հիւն Տայաս, որ անձրեւուն տակ Գոյնիկ կը մնայ տիրական Երկայտութիւն մը

Ճուրթոլի աշխարհին մէջ անաչցուածքայնութիւնը պիտի ըլլայ իրարու դէմ պիտի ճակատին այսօր՝ իրենց վրայ կեդրոնացուելով ըլլոր յուսարձակները:

Այս մրցումին մասին իր կարծիքը տուաւ նաեւ Արման Քիլի մարզիչ Մարտի Պիէլլա, որ ըսաւ, թէ իրողութիւնը այնպէս

